

ՔՐԻՍՏՈՆԻ ՀԵՄՈՒՐԻ ԱՇԱԿԵՐԸ

Երինաւոր վարդապետն Յիսուս  
միշտ շրջապատռած էր ժաղվզգոց  
մեծ բազմութենէն և իւր աշակերտաց  
փոքրիկ հօսէն, շատ մեծամեծ հր-  
բաշքներով, քարոզութեամբ եւ բա-  
րերարութեամբ բոլոր շրջակայ գա-  
ւառներուն սիրելի ու ցանկալի եղած  
էր, Ամեն ոք կը բաղձար զի՞նքը տես-  
նել, ամեն տուն կուզէր հիւրնիալել  
եւ ծառայութիւն մի մատուցանել,  
ամեն գաւառ կը փափագէր զայն ի-  
րեն իշխան ունենալ: Գանվինորա ձեռ-  
քերէն գթութիւն ու մարդասիրու-  
թիւն կը սփռէր, նորա ամեն մէկ խոռ-  
քերը անոնց միօիթարութիւն և կեն-  
դանութիւն կը չնորհէր: Սակայն նա  
անկարու էր, աւելսրդ պիտոցից հոգ  
չունէր, նորա թմագաւորութիւնը այս  
ավարհէն չէր. նա նիւթական փառ-  
քերէ և սին պարծանքներէ կը խոռ-  
սէր. նորա փառքն էր քարոզել և բա-  
րերարել, նա չէր կամէր առանց բա-  
րիք ընելու որ անցնել, շարունակ խր-  
նամք և բարութիւն կը մատակարարէր  
ամենուն:

Օր մի երբ այսպէս մեծամեծ ե-  
րասխատիքներով փառաւորուած էր ժո-  
ղովուրդէն իւր աշակերտներով տափա-  
րակ տեղ մի իջաւ քիչ մի հանգիստ  
առնելու և ժողովրդեան օշտի համար  
նոր բարիքներ պատրաստելու:

Այն տեղէն սրափ ցաւօք թշուառ ժո-  
ղովրդեան վերայնայեցաւ, տեսաւ զա-  
նոնք ոք դպրաց, փարիսեցաց, օրէնքո-  
գիտաց և քահանայից սննողութեամ-  
բը, ադիտութեամբը, փառասիրու-  
թեամբը, մոլորութեամբ ու երես-  
պատ կեղծաւորութեամբը զուրկ մը-  
նացեր են ամեն բանէ, զուրկ ճշմա-  
րիս առաջնորդէ, զուրկ անձնադիր  
հովուներէ, զուրկ Աստուծոյ խոսքը

տելու միջոյներէ և զիրջապէս տեսաւ  
որ զուրկ կը գտնուին բոլոր հոգեւոր  
միօիթարութենէ, եւ անսաւ որ ցը-  
րուած են անհովիւ ովտարներու նման,  
վշտացաւ, և արգահատական կերպիւ  
անագատում սիրով լցուած՝ խօսեցաւ  
աշակերտաց հետ ասելով “Հունձքը բո-  
լումք են և մշակք սակաւ, արդ ա-  
ղաշեցէք զուրկ հնձոցն զի հանցէ մշա-  
կը ՚ի հունձմ իւր ու:

Մարդասիրութեամբ և հայրական  
գթով լեցուած էր Յիսուսի սիրութ եւ  
կուզէր ժողովրդեան հոգեւոր պիտոց  
իցը նովաստել. ուստի նոցա թշուա-  
ռութեան վերայ գլացած վիշտը եւ  
նոցա պիտոցը աշակերտաց յայտնե-  
լով ուսոց որ նորա եւս իրեն նմանին.  
ոյս յայտարարութեամբ կամեցաւ ար-  
պաւորել նոցա մէջ իւրեանց ապագայ  
պաշտօնի պարտաւորութիւնքը. ու-  
սոց թէ նորա մեծ հոգ պէտք է ունե-  
նան ժողովրդեան վերայ և նոցա հո-  
գեւոր պիտոցից համար փոյթ էւ ջանք  
ըլ խնայեն. ուսոց որ նորա հանդբա-  
տութիւն, փառք և պարծանք ողեաք  
է համարին միայն իրենց ուսուցած,  
կրթած, բարբերնին ուղած և մեղ-  
քերէ ազտո մնալ վորժեցուցած ժո-  
ղովրդը, և ոչ բնաւ երկրաւոր ու-  
րիշ որ և իցէ բան: Այս կերպով յոր-  
դորեց զանոնք իրեն նմանիլ եւ պատ-  
րաստեց զանոնք իրեն ճշմորիս աշա-  
կերաներ լինելու, “Ներիշ է, ըսաւ,  
որ աշակերտը իւր վարդապետին պէտ  
լինի ու դուք եւս պէտք է այժմէն ինձ  
նմանիք սրտով, խարհրդով և գործով:

Հուսկ ապա, զանոնք սցսպէս հր-  
բահանդելէ վերջը որոշում ըսաւ եւ  
նոցա մէջէն տասներկու հոգի լինարեց,  
ննջպէս ուրիշ անդամ ալ եօմանա-  
սուն աշակերաներ, եւ զանոնք զգդ  
զգդ զիկեց ժողովրդեան քարտզելու,  
ուսուցանելու, նոցա հոգեւոր ու

մարդի աւոր տիսաներէն զիրենք բժշկելը , մեղաց ծառայութենէն աղասին լրւ և Աստուծոյ արքայութեան ծառապարհն նոցու ուսուցանելը և առջնորդելու համար :

Մեծ ու Վահեմ էր այս պաշտօնը , հարմաւ ուրեմն զրկուողէն ալ մեծամեծ հանգամանկընէր կը պահանջուէր : Նու արտօնութիւննէր , զրկոցին խոռքերն ու նշանը պիտի ունենալ : Այս ամինը տուաւ Յիսուս ընդունակ եղաղներուն : Սոյն պաշտօնը յանձնած ատեն իբրեւ անհրամէցա հարկ , պաշտօնին յարակից և իբր օրոցից հանգամանք քանի մի խրատնէր և նշաններ տուաւ , սրոց բովանդակութիւնը է . — Աւելական ինչքը , աւելորդ պէտքը , մարմնոց հոգերը , փափկութիւնը և այն ատել , իբրենց յանձնը ւած պաշտօնէն կատարելէ զիրենք արգելու ամեն բան մինչեւ իսկ իբրենց իեանքը արհամարհել , անդադար շըրջիլ և Աստուծոյ խօսքը քարոզելու ըզ բատիլ : Հրամացից որ կերակրոց համար իբրենց ախորժակը չը տածեն , այլ ինչ որ իբրենց բերուի , զայն ուտեն . և եթէ ասանկ չափաւորութեամբ եւ ժումկալութեամբ ապրելով եւ ոյս պատուէրները պահելով ընթանան , իբրենց բան չը պիտի պակսի , կարեւոր ոյխոցքնին ոյխունին . քանզի « Մշակը իւր վարձքին արժանի է ո .

Արգ՝ եթէ նոքա իբրենց պաշտօնը սցովէս ամենայն ձշլութեամբ , ուղղութեամբ , սիրով և կամաւ . կատարէին , այն ատեն Յիսուսի Քրիստոսի գեսպանն ու փափանարդն էին , նորա առաքեալներն ու ձ՛ԵՄԱՐԻԾ Ա՛ՅԱԿԵՐՏՆԵՐՆ էին և այնալիսի աշակերտաց , ասանկ պաշտօններ կատարելու համար զրկուած գեսպանաց էր որ ասոց Յիսուս , « Որ զձեզ անարդէ , զիս անարդէ , եւ որ զձեզ ընդունի . զիս

ընդունի » .

Բայց երբ Քրիստոսի աշակերտ անուանեալ մէկը չունենալով և լրսանալով պաշտօնի պահանջած հանդամնեկները , մոռանալով իւր պարտաւորութիւնները . — Փիսանակ Աստուծոյ խօսքը քարոզելու ինքզինք կամ իւր կամեցած մէկ մարդը քարոզէր , իւր անձին փառքն որսնէր , այլ և այլ պաշտօններ և իշխանութիւններ սաւանալու ձկտէր և առանկ սին փառաց տենաջնքով ժողովարդ յուղէր , զինքն ուղած աեղը չերթար և ցուզոծ տեղը կողմ ու կուսակից ճարելով և ուրիշ անարժան հնարիւք և միջոցաւ բոնանալ կենալ ուղէր , ուխտ ու խոստոմքն գրմէր , երգմանազնց լինէր , աղքատը կեղեցէր և մեծատունը շողոքորթէր , ինչք դիզելու ջանայր , հարբատութեան , ճոխութեան և բարձրագահ ամոռոց ակնդնէր . փոյլուն ուգունագել հանդերձներով լափեր կանոնց նման եթէ յատից մինչեւ ցգըլուին պճնուէր , մեծածախ հանդերձանօք կերակրոց ցանկար և պահանձնէր . առաւատէն ցերեկց ուենեւակը փափուկ գորգերու մէջ անդործ նըստէր , կամ զքօսավայրերու և տուներու մէջ գատարիաբանութեամբ ծաղրածութիւն և խեղիստամկութիւն ընէր և կամ ուրիշ խաղերավ զըտովէր , եթէ , կըսէմ ծիսլով ժամանականցնելու ջանար , գինուով թմբէր եւ քննով գանդաշէր , հեշտութեանց և շուայտութեց մէջ թաւալէր , անս անշտաշտ այն ատեն ՅԻՍՈՒՍԻ ձ՛ԵՄԱՐԻԾ Ա՛ՅԱԿԵՐՏՆԵՐՆ չէր լինէր — , ինչպէս որ Յիսուս ալ այնալիսին լընտրեց :

Նա եկեղեցւոյ անդամ կամ պաշտօն եայ չէր եւ չէ , կուղէ ժողովական լինի կուղէ եկեղեցական , հոգ չէ , թուլ այն պիտին դափիր կամ սարկաւագ , կամ քուհամար լինի , Ամրդապետ , Եպիսկոպոս

կամ կաթողիկոս իսկ լինի.քանզի տմեն  
քըն ալ իրենց պարտքը, պաշտօնը, յատ-  
կութիւնն ու նշանն ունին. բնութեան  
մշջ իր մի քը կայ որ ուրիշ իրէ մի տար-  
բերելու համար իւր մասնաւոր յառ  
կութիւնը չունենայ, աշակերտն ալ  
իւր աշակերտութեան յատկութիւ-  
նը ունի.

Յիսուս Քրիստոս ոչ նորա աւետա-  
րանով և ոչ ուրիշ մի տեղ երեք քա-  
րտղած և ուսուցած չէ թէ այնպիսի  
ներն իրեն աշակերտ կրնան համա-  
րուիլ. այլ ընդ հակառակն ուսուցած  
է թէ « Ես պատղո նոցա ծանիջիք զնո-  
սա՞ն, գառնազգեստ գայլ, անձնասէր  
հովիւ, կոյր՝ առաջնորդ կուրաց, ա-  
նուանած է զայնպիսիս : Եւ ոչ ալ ե.  
կեղեցին ընդունած է այսպիսի սկզբ  
բունք մի, որ իւր պաշտօնէից զեղ-  
ծումներն ու անարժանութիւնները  
տեսնելով և գայթակղելով հանդերձ  
ստիպուած լինի զանոնք իրբեւ Քրիս-  
տոսի աշակերտ ընդունիլ. « Ամեն հո-  
գոյ մի հաւատոյք, ալ հոգիները  
փորձեցէք և տեսէք թէ նոքա Աստուծ-  
մէ են » . ըստ Առաքեալը :

Այս պատճառաւ եթէ մէկը Քր-  
իստոսի ճշմարիտ աշակերտին նշանն  
ու գործը չունենայ և եկեղեցւոյ ան-  
դամներէն մին զայն մերմէ իրաւամբ՝  
իրք Քրիստոսի անարժան աշակերտ,  
այն ատեն ոչ Քրիստոս մերժուած և  
ոչ ընդհանուր եկեղեցին անարդուած  
իր լինի . քանզի եկեղեցին անարատ է,  
իսկ նա արատ ունենալուն և սրբուիլ  
չուզելուն համար մերժուած ու ա-  
նարդուած է : Եկեղեցին անարատ է,  
ուստի ինչ որ արատաւոր է, եկեղեցի-  
նի չէ, արատաւոր պաշտօնեայն կամ  
Քրիստոսի աշակերտութեան պատրը-  
ւակաւ Քրիստոսի հրամանաց և օրի-  
նաց հակառակ չարժող աշակերտ ա-  
նուանեալը երբ իւր արատաներուն հա-

մար կը դաստի, ողէ սոք է զգայ, դաս-  
նոյ և սրբուի, առզա թէ ոչ զինքն ա-  
նարդողը ոչ թէ միայն զՔրիստոս և  
զեկեղեցին անարդուած չը լինիր, այլ  
ընդհակառակն նաև պատռած, պաշ-  
տուծ և նորա սրբութեան ու փառաց  
նախանձախնդիր կը հանդիսանայ :

Նոյնպէս ալ երբ Եկեղեցւոյ ան-  
դամներէն մին, ժողովրդական մի կ'ա-  
րաւաւորի և կամակրութեամբ իւր  
չորեաց վերայ կը յամատի, սուռ-  
թեամբ արդարանալու համար ամեն  
վատ ու անարժան միջոց կը գործածէ .  
Երբ Քրիստոսի ճշմարիտ աշակերտին  
խրամները, կշտամբանքն ու հոգեւոր  
պատիմները կանարգէ և չարասրտու-  
թեամբ իւր հոգեւոր առաջնորդը,  
ուսուցից և հոյրը կ'անպատուէ . կը  
թշնամանէ և կը զրապարտէ, այն ատեն  
նոյն ժողովրդակրոնը, նոյն անձը, ով որ  
ալ լինի Յիսուսի ճշմարիտ աշակերտը  
անարժած անարատուած և ընդունած  
կը լինի, և զայն անարգելով զՅիսուս  
անարժած կը լինի :

Խակ այսպիսի պարագայից մէջ նոյն  
ճշմարիտ աշակերտին պարունէ ա-  
ռանց հակառակութեան նոցա մէջէն  
անցնիլ և գնալ, ինչպէս Յիսուս Նո-  
րա զորէթի անհաւան ժողովրդոց ըրաւ-  
երբ զինքը լեռնէն վար գահաւէծ առ-  
նելու կը տանէին, ուրիշ անգամ մի  
եւս երբ զինքը պիտի քարկոծէին, խոյ  
տուաւ :

Մանաւանդ ոչ տղաքէն Յիսուս  
իւր աշակերտները քարտզելու դրկած  
ատեն ասած էր նոցա թէ, « Զձեզ  
շընկունած քաղաքէն փախէք և ուրիշ  
քաղաք գնացէք ո . ըսել է որ պէտք  
չէներհակի, ընդդիմանայ և զօրութիւն  
կազմէ : Նոյնպէս և Յիսուսի բերնով  
խօսող Պողոս Ա. Առաքեալն եւս երբ  
եպիսկոպոսի հանդամանքները կըսոո-  
րագրէր՝ ըստ, թէ « Եպիսկոպոսը կը-

ռուտաներ կամ հակառակող չը պիտի  
լինի ։

Ուրեմն այն աշակերտն որ այս հան-  
դումանքները չունի ։ ՃԵՄԱՐԻՑ ԱՇԱ-  
ԿԵՐԸ չէ ։ և իրեն անարդուելովը ե-  
կեղեցն ալ անարդուած չը լինիր ։  
ասկէց այլ կերպ հասկացողն ու քարո-  
զողը Ասաւածոյ խօսքը կը թիւրէ և կը  
կամակրիւ ։

## ՄԵՐ ՎԻՃԱԿԻՆ Ի՞ՆՉ ՊԻՏԻ ԼԻՆԻ

Ով որ բան մը կը սիրէ ։ անոր հո-  
գը եւս կը տանի ։ կը բերկրի զայն ա-  
պա հովութեան մէջ տեսած ատեն և  
կը տիրի ու անհանգիստ կը լինի երբ  
նորա վտանգը կը նշմարէ ։ Սցն զգա-  
ցումը բնական է ոչ միայն մարդոց ։  
այլ և անբանից անգամ ։ զորս կը աես-  
նեմք թէ ինչպէս կը գաղանանան և կը  
կատաշին նոքա մինչ իրենց սիրելի ձաւ  
կը վտանգի ենթակոյ կը տեսնեն ։  
կամ իրենց որսի յափշտակուիլը կը զ-  
գան ։ Մարդո որ միշտ բարձր է ա-  
նասուններէնիւրիմացականութեամբ ։  
բարձր է անսնցմէն նոյնպէս իւր լզ-  
գացմանց կատարելութեամբ ։ Արդ՝  
մարդ մը որ իւր սիրած որ և իցէ մի  
անհան առարկայի համար յուզումներ  
և զրգութեամբ կը կրէ ։ ապա քա-  
նի առաւել չի յուզուիր նա և չ'տագ-  
նապիր ։ երբ իւր ուշադրութեան ա-  
ռարկայ իւր սիրելի Ազգն եղած լի-  
նի ։ մեր խօսքը անտարբերներու հա-  
մար չէ ։ որոնք աշատը ալ քանդուի  
հոգ չեն ըներ ։ և ոչ անձնասէրներու  
համար ։ որոց բոլոր զգացումներն մի-  
միայն մէկ կիտի վրայ կը կայանայ ։ այն  
է իրենց շահը ։ Այլ մէք նոցա համար  
կը խօսինք ։ որոնք մորդ կօրէն կ'ապ-

րին ։ ընկերականութեան օգուտները  
կը ճանաչն և ազգութեան ու աղ-  
գայնութեան նշանակութիւնը գիտենու  
Բաւական ժամանակէ ՚ի վեր մեր  
թիւրքիաբնակ ազգայնոց ունեցած  
տարտամ ։ շիոմք և անանդորր վիճակը  
արդէն մտածողութիւն կը պատճա-  
ռէր հայասէր սրտերու ։ իսկ այժմ ա-  
նոնց վրայ աւելնալով արգի շփոթու-  
թիւնքն ու տակն ՚ի վրայութիւնքը ։  
Հրապարական թերթերու լուտանք-  
ներն ու գրգռութիւնքը ։ Ազգայնն  
վարչութեան անհամաձայնութիւնն ու  
պառակումները եւ վերջապէս Ազ-  
գայնն կառավարութեան անկերպա-  
րան վիճակը ։ ազգին կացութիւնը ա-  
ւելի ազաւնալի և վտանգալից կը գոր-  
ծեն ։ Ազգասէր սրտերն տեսնելով այս  
ամէն անպատճէնութիւնները ։ զգա-  
լով նոցա աղետալի հետեւութիւնը և  
նախատեսելով ապագայն կորուլաբիթ  
ակամք ։ կը յուզուին կը մորմորին և  
ահարեկ ու շուարենալ կոկորն աղաջա-  
կել ։ թէ ինչ պիտի զլայ մեր վերջը և  
ուր պիտի հասնիմք այս ընթացքով ։

Եւ արգարեւ անհնար է ձշմարիտ  
հայու մը գիտնալ հայու նախոկին փա-  
ռահեղ վիճակը ։ տեսնել նորա արդի  
խղճութիւնը ։ բաղդատել ներկայն  
անցելցն հետ ։ նշմարել ապագայն մի-  
գապատ և մրրկալից ու չը մորմորել և  
շարտատուել և չը խանդաղատիլ ։ Քան-  
զի կոր ժամանակ ուր մենք եւս ար-  
դի մեծամեծ ազգաց կաէս փառօք եւ  
պատուօք ձոխացեալ ժամանակի քա-  
ղաքականութեան մէջ բարձր զիրք և  
նշանաւոր տեղ մը ունէինք ։ կար ժա-  
մանակ ուր մեր հզօր թագաւորներն  
ու փառաւոր իշխաններն զազդս եւ  
զաղինս կը կառավարէին իմաստութիւնը ։  
կար ժամանակ ուր մենք եւս շքեղ  
և բարելի հայրենիք մը ունէինք ։ այն  
պերճ գրախառավայրը և այն ճոփի ու